20 հունվարի 2016 թվականի N 35 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1501-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 9-ի N 1116-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքում պետական միջոցների հաշվին վերակառուցված N 5 բազմաբնակարան շենքի չբաշխված բնակարանները բաշխելու մասին» N 1501-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) ուժը կորցրած ճանաչել որոշման 6-րդ կետը և 7-րդ կետի 2-րդ ենթակետը.

2) որոշման N 1 հավելվածի՝

ա. 4-րդ կետի 5-րդ սյունակում «2» թիվը փոխարինել «3» թվով,

բ. 6-րդ կետի 2-րդ սյունակում «Բաշիր» բառը փոխարինել «Զարիֆ» բառով.

3) N 3 հավելվածում՝

ա. 13-րդ կետի վերջին՝ 6-րդ սյունակում «2» թիվը փոխարինել «3» թվով,

բ. 17-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 18-րդ և 19-րդ կետերով.

«

18.	Ասատրյան Արտակ Սարգսի	AN 0713594, տրված՝ 19.11.2013 թ., 001-ի կողմից	Ծաղկահովիտ	4	2
19.	Խաչատրյան Ռուզան Վոլոդյայի	ՀՀ/ARM 002424711, տրված՝ 02.04.2014 թ., 024-ի կողմից	Ծաղկահովիտ	5	3

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ